

ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Պրինցիպալ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Գործակալ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Գործակալը պարտավորվում է վարձատրությամբ՝ Պրինցիպալի հանձնարարու-
թյամբ, կատարել իրավաբանական ու այլ գործողություններ, որոնք կապված են Պրինցիպալին պատկանող ար-
տադրանքի իրացման, ինչպես նաև այդ նպատակով այլ պայմանագիր կնքելու և իրավաբանական բնույթ չունե-
ցող գործողություններ կատարելու հետ:

1.2. Սույն պայմանագրի շրջանակներում Գործակալի գործունեության մեջ է մտնում՝ _____

1.3. Սույն պայմանագրից բխող իր պարտականությունների կատարման համար Գործակալը երրորդ անձանց
հետ կնքում է առևտրային պայմանագրեր:

1.4. Գործակալի կողմից կնքվող ցանկացած պայմանագիր պետք է նախապես համաձայնեցվի Պրինցիպալի
հետ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Երրորդ անձանց հետ Գործակալի կնքած պայմանագրից բխող իրավունքները և պարտականությունները
պատկանում են Գործակալին:

2.2. Պրինցիպալի անունից երրորդ անձանց հետ Գործակալի կնքած պայմանագրից բխող իրավունքներն ու
պարտականությունները պատկանում են Պրինցիպալին:

2.3. Իր կամ Պրինցիպալի անունից կնքված յուրաքանչյուր առանձին պայմանագրից բխող պարտականու-
թյունները կատարելու դեպքում Գործակալն իրավունք ունի ստանալ վարձատրություն:

2.4. Սույն պայմանագրով որոշված պարտականությունները կատարելիս Գործակալը պետք է գործի Պրինցի-
պալի ցուցումներին համապատասխան: Գործակալն իրավունք ունի հրաժարվել Պրինցիպալի ցուցումներից հե-
տևյալ հանգամանքներում՝

2.4.1. եթե ցուցումներից հրաժարվելն անհրաժեշտ է Պրինցիպալի շահերի լավագույն ապահովման նպատա-
կով:

2.4.2. եթե հնարավոր չէ տեղեկացնել Պրինցիպալին կամ նրանից ժամանակին պատասխան ստանալ:

2.6. Յուրաքանչյուր պայմանագիր կնքելուց հետո սույն պայմանագրի կատարման շրջանակներում Գործակա-
լը պարտավոր է ոչ ուշ, քան _____ օրվա ընթացքում, Պրինցիպալին ներկայացնել հաշվետվություն:
Անհրաժեշտության դեպքում Պրինցիպալն իրավունք ունի պահանջել, որպեսզի հաշվետվությունը ներկայացվի
գրավոր:

2.7. Եթե Պրինցիպալն առարկություններ ունի հաշվետվության վերաբերյալ, ապա նա պարտավոր է այդ մասին
տեղեկացնել Գործակալին՝ հաշվետվությունն ստանալու օրվանից _____ օրվա ընթացքում:

2.8. Հաշվետվության ընդունման փաստը համարվում է հաստատում այն բանի, որ Գործակալը պատշաճ կա-
տարել է սույն պայմանագրի 1.1 կետում նշված պարտավորությունների համապատասխան մասը:

2.9. Գործակալի հաշվին մուտքագրվող գումարները Գործակալը համապատասխան ժամկետներում պետք է
փոխանցի Պրինցիպալին:

3. Գործակալի վարձատրությունը և նրա կատարած ծախսերի հատուցումը

3.1. Պրինցիպալի կողմից Գործակալի վճարը կազմում է _____ (_____) դրամ:

3.2. Պրինցիպալը վարձատրությունը վճարում է ոչ ուշ, քան կոնկրետ գործարքով ամբողջ ստացածը Գործակա-
լի կողմից հանձնելու պահից _____ (_____) օրվա ընթացքում:

3.3. Գործակալի կողմից իր պարտականությունները կատարելու հետևանքով առաջացած լրացուցիչ օգուտը
մնում է Գործակալի տնօրինության ներքո:

3.4. Գործակալն իրավունք ունի պահել վարձատրության գումարը, ծախսերը և լրացուցիչ օգուտը, որն առաջա-
ցել է իր պարտականությունները կատարելու հետևանքով:

3.5. Վարձատրելուց բացի, Պրինցիպալը Գործակալին է հատուցում սույն պայմանագրի պայմանների կատար-
մամբ Գործակալի կրած հետևյալ ծախսերը՝ _____

_____:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կող-
մերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով,
որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության
հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարե-
ցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված

պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Ժամկետները

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև աշխատանքների վերջնական ավարտի և պայմանագրից բխող պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ գործողությունների ավարտման պահը:

5.2. Պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում հաշվարկները կատարվում են՝ ելնելով մատուցված ծառայությունների փաստացի ծավալից:

5.3. Պրինցիպալի կողմից Գործակալի ծառայությունները պայմանագրով պայմանավորված ժամկետներում չվճարելու դեպքում Գործակալն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը՝ մինչև դրանց վճարման պահը: Նման դադարեցումը չի համարվում Գործակալի պարտականությունների չկատարում:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Այլ պայմաններ

7.1. Սույն պայմանագրի բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը:

7.2. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Գործակալ

ստորագրություն

Պրինցիպալ

ստորագրություն